



50 (234). ՎԵՌՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

Տերտեր քարոզ կիտեր գողութենի վրա, թե ի՞նչ վատ բան է գողութեն, թե վեռչին դատաստանին աստված ի՞նչ պատիժ կիտա գողերուն:

— Տե՛րտեր,— կրսե մարդ մե,— վեռչին դատաստանին աստված ի՞նչ գինա, օր ես, ըսինք թե, Ֆլան մարդու էժ գողցեր իմ:

— Վեռչին դատաստանին,— կրսե տերտեր,— գողցրված էժ լե գիկա, կրսե. «Ըս Ֆլան մարդու սև աչքերով, թուխ մազերով, կեռ կոտրչներով էժն իմ, գիսի գողցող լե՛ Ֆլան մարդն է»:

— Շա՛տ աղեկ,— կրսե հարցնող,— էն վախտ ես լե կը բռնիմ իժոռ շանկըչներուց, թասլիմ կէնիմ իւր տիրոջ, տեսնանք՝ աստված ընձի ի՞նչ կոնա էնե:

